ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2020թ. օգոստոսի 24-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության >> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանի հաղորդումը ամբիոնի անվանափոխության հարցի շուրջ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Վաստակավոր արտիստուհի Սոնա Առուստամյանը, դոցենտ Գոհար Աբրահամյանը, դոցենտն, մանկ. գ. թ. Վերա Ավետիսյանը, դասախոսներ Արթուր Տոնոյանը, Սուրեն Խաչատրյանը, Տաթևիկ Նիկոյանը և ուրիշներ: Քանի որ պարարվեստի մանկավարժության գերխնդիրը բաժնի ուսանողներին պարարվեստի դասավանդման ճշգրիտ մեթոդներին ծանոթացնելն է, հետևապես առաջարկվեց <<Պարարվեստի մանկավարժություն>> ամբիոնը անվանափոխել <<Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի>> ամբիոնի:

ՈՐՈՇԵՑԻՆ

Պարարվեստի մանկավարժության ամբիոնը անվանափոխել <<Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի>> ամբիոնի:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2020թ. սեպտեմբերի 2-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

Ուսանողների հանձնարարությունների և ուսումնական նյութերի ըստ թեմատիկ տրոհման տրամադրման հարցը:

Գնահատվող հանձնարարությունների առկայության անհրաժեշտության հարցը ելնելով մասնագիտական առանձնահատկություններից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Ամբիոնի վարիչ Կ. Գևորգյանը, դոցենտներ Գ. Աբրահամյանը, դասախոսներ Գ. Կարապետյանը, Ն. Աբովյանը և այլոք:

Ելույթ ունեցողները նշեցին, որ « Google Classroom» էլեկտրոնային ուսումնական հարթակն բացառիկ հնարավորություն է ընձեռում ուսանողներին առցանց ծանոթանալ դասախոսական նյութերին ըստ դասընթացների նկարագրերի թեմատիկ տրոհման, ինչպես նաև ծանոթանալ տվյալ նյութի գրականության աղբյուրների հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ

Հետագա ամբիոնի նիստերում մշտական քննարկան առարկա դարձնել էլեկտրոնային ԱՈՒՄՓ-ների առկայության, դրանցում կատարված փոփոխությունների, բովանդակության և դրանցից բխող էլեկտրոնային առաջադրանքների և տրամադրվող ուսումնական նյութերի հարցը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2020թ. նոյեմբերի 10-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի >> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

Հեռակա ուսուցման համակարգի ուս. տարվա մեկնարկի համար քննարկել տեսական և գործնական պարապմունքների ընթացքում ուսուցանվող նյութի մատուցման ձևերն ու մեթոդները:

Ընթացիկ հարցեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Ամբիոնի վարիչ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կ.Բ. Գևորգյանը, ամբիոնի որակի պատասխանատու, դասախոս Սուրեն Խաչատրյանը, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Գ.Ա. Կարապետյանը, դոցենտներ Գ.Ս. Աբրահամյանը, Վ.Ի. Ավետիսյանը, դասախոսներ Ս.Մ. Առուստամյանը, Ա.Վ. Մելքոնյանը, Տ.Ս. Նիկոյանը և ուրիշներ: Ելույթ ունեցողները նշեցին, որ վերանայվել են ուսուցանվող նյութերը, կատարվել անհրաժեշտ շտկումները: Նյութերը ուսանողներին տրամադվել են նախապես՝ տեղադրվելով classroom հարթակում:

ՈՐՈՇԵՑԻՆ

Կատարել ծրագրերի քննադատական վերլուծություն՝ դիտարկելով դրա ուժեղ և թույլ կողմերը և նախաձեռնել վերլուծությունից բխող ծրագրային փոփոխություններ:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2020թ. դեկտեմբերի 25-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի >> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգման արդյունքների ամփոփում:

2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի քննությունների ընթերակաների գրաֆիկի հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Ամբիոնի վարիչ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կ.Բ. Գևորգյանը, ամբիոնի որակի պատասխանատու, դասախոս Սուրեն Խաչատրյանը, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Գ.Ա. Կարապետյանը, դոցենտներ Գ.Ս. Աբրահամյանը, Վ.Ի. Ավետիսյանը, ՀՀ վաստակավոր արտիստուհի Ս.Մ. Առուստամյանը, դասախոսներ Է. Մակարյանը, Ա. Թադևոսյանը և ուրիշներ:

Ելույթ ունեցողները նշեցին, որ միջանկյալ քննությունները անցկացվել են պատշաճ մակարդակով, ուսանողների պատրաստվածությունը կարելի էր գնահատել լավ:

Քննարկվեցին առաջին կիսամյակի քննությունների ընթերակաների գրաֆիկները:

Ըստ առարկայական առանձնահատկությունների կազմեցին ընթերակա դասախոսների ցուցակները:

ՈՐՈՇԵՑԻՆ

Արդյունքների գնահատումը համարել լավ:

Հաստատել ներկայացվող գրաֆիկները:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

2021թ. հունվարի 21-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ուսանողների հանձնարարությունների և ուսումնական նյութերի ըստ թեմատիկ տրոհման տրամադրման հարցը:
2. Գնահատվող հանձնարարությունների առկայության անհրաժեշտության հարցը՝ ելենլով մասնագիտական առանձնահատկություններից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Ամբիոնի վարիչ Կ. Գևորգյանը, դոցենտներ Գ. Աբրահամյանը, դասախոսներ Ֆ. Քարամյանը, Ս. Միքայելյանը, Գ. Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ

Հետագա ամբիոնի նիստերում մշտական քննարկան առարկա դարձնել էլեկտրոնային ԱՈՒՄՓ-ների առկայության, դրանցում կատարված փոփոխությունների, բովանդակության և դրանցից բխող էլեկտրոնային առաջադրանքների և տրամադրվող ուսումնական նյութերի հարցը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

2021թ. փետրվարի 18-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2020-21 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ԱՈՒՓ-ների հաստատում, վերահաստատում:

2. Հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների թեմաների վերահաստատում:

3. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանի հաստատում, ամբիոնի աշխատանքային պլանի հաստատում:

4. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին – 2-րդ կիսամյակի ԱՈՒՓ-ների հաստատման և վերահաստատման հարցը: Որոշեցին - քննարկում, ուղղումներից հետո ԱՈՒՓ-ները google docs / PDf կամ այլ տարբերակով տեղադրել Classroom հարթակում :

2. Լսեցին - Կ. Գևոգյանը հիշեցրեց հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ուսանողների ավարտական բեմադրությունների անվանումները:

Որոշեցին – թեմաները հաստատել:

3.Լսեցին – Ամբիոնի և ամբիոնի ՊԴԱ-ի երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանի հարցը: Ամբիոնի վարիչի Կ. Գևորգյանը ներկայացրեց ամբիոնի աշխատանքային պլանը:

Որոշեցին – Ամբիոնի և աշխատակազմի երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանները հաստատել:

4.Ընթացիկ հարցեր

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

2021թ. մարտի 3-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության >> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

Ավարտական կուրսերի ավարտական բեմադրական աշխատանքների դիտում պետական քննական հանձնաժողովի կողմից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Ամբիոնի վարիչ Կ. Գևորգյանը, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Գ. Կարապետյանը, դոցենտներ Գ. Աբրահամյանը, Վ. Ավետիսյանը, դասախոսներ Ս. Առուստամյանը, Ա. Մելքոնյանը, Տ. Նիկոյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ

Որոշակի շտկումներ կատարել որոշ պարային բեմադրություններում և թույլատրել ներկայացնել որպես ավարտական աշխատանք:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ ª ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

2021թ. ապրիլի 27-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության >> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

Մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն:

Ընթացիկ հարցեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Ամբիոնի վարիչ Կ. Գևորգյանը, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Գ. Կարապետյանը,Յուրա Կոստանյանը, դոցենտներ Գ. Աբրահամյանը, դասախոսներ Ս. Առուստամյանը, Ա. Մելքոնյանը, Տ. Նիկոյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ

Հաստատել մագիստորսական ատենախոսությունները:

ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

2021թ. մայիսի 20-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության >> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

Դասախոսական նյութերի քննարկում:
Մագիստրոսական թեզերի որակի բարձրացման հարցերի քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Վաստակավոր արտիստուհի Սոնա Առուստամյանը, դոցենտ Գոհար Աբրահամյանը, դոցենտն, մանկ. գ. թ. Վերա Ավետիսյանը, դասախոսներ Արթուր Տոնոյանը, Սուրեն Խաչատրյանը, Տաթևիկ Նիկոյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ

Բարձր մակարդակի հասցնել կրթական ծրագրի մատուցման որակն ու ակադեմիական ստանդարտները ծրագրի իրականացման ընթացքում:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

2021թ. հունիսի 25-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ:

1. Առկա և հեռակա համակարգերի առցանց ավարտական քննությունների ամփոփում:

2 . Տեղի ունեցած պաշտպանության արդյունքների քննարկում:

3. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին – Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի ամբիոնը այս տարի ունեցել է առկա ուսուցման 46, հեռակա՝ 35 և մագիստրատուրայի 11 շրջանավարտ: Ապագա պարուսույց-մանկավարժներն անգամ այս իրավիճակում կարողացան ստեղծագործել, գտնել հետաքրքիր լուծումներ՝ արտահայտելով ուսումնառության ընթացքում ստացած տեսական և գործնական գիտելիքները:

Ավարտական թեզերը հիմնականում վերաբերում էին պարարվեստի հիմնախնդիրներին, իսկ տեսագրված որոշ հատվածներ քննական հանձնաժողովին ներկայացվեցին տեսաերիզներով: Կային նաև աշխատանքներ, որտեղ շրջանավարտը ներկայացնում էր պարային ողջ բեմադրությունը՝ բեմելից մինչև պարողների թիվ, նրանց դասավորությունը բեմում, պարային շարժումների նկարագրություն և այլն:

Ավարտական կուրսի ղեկավար, Պարարվեստի մանկավարժության ամբիոնի վարիչ Կարեն Գևորգյանը ափսոսանքով նշեց՝ դեռևս հունվարին պատրաստ էր այս ուսումնական տարվա հաշվետու համերգ-քննությունը: Այն նվիրված էր Մհեր Մկրտչյանի 90-ամյակին. «Խոշոր շահում» ֆիլմի հիման վրա ստեղծված պարային բեմադրության մեջ ավարտական կուրսի յուրաքանչյուր ուսանող իր առանցքային

դերն ուներ՝ պարային կերպարի մատուցման առանձնահատկություններով հանդերձ, որը պետք է լրացներ ամբիոնի տարեվերջյան թեմատիկ ուղղվածությամբ խորեոգրաֆիկ ներկայացումների շարքը»,-նշեց Կարեն Գևորգյանը:

Անդրադառնալով առցանց քննությունների անցկացման ձևաչափին և արդյունքներին, Կարեն Գևորգյանն ուրախությամբ նկատեց՝ գնահատականներում գերակշռում է գերազանցը. այն ոչ թե առցանց գնահատման հետևանքն է, այլ ողջ ուսումնառության ընթացքի քրտնաջան աշխատանքի արդյունքը: Ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովը նախագահել է արվեստագիտության թեկնածու, պարարարվեստի տեսաբան Նաիրա Կիլիչյանը, որը ևս բարձր է գնահատել քննությանը ներկայացված աշխատանքները:

Արտահայտվեցին – Դոցենտ Գոհար Աբրահամյանը, Յուրա Կոստանյանը, ՀՀ վաստակավոր արտիստուհի Սոնա Առուստամյանը, ամբիոնի որակի պատասխանատու, դասախոս Սուրեն Խաչատրյանը:
2.Ընթացիկ հարցեր:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ